ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԳԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 2-րդ փողոցը (սկսվում է Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցից, հասնում՝ Շահամիրյանների փողոց) անվանակոչել հայ քանդակագործ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Նորայր Կարգանյանի անվամբ՝ «Նորայր Կարգանյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԳԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նորայր Կարգանյանը ծնվել է 1948 թվականի հունիսի 1-ին, Երևանում:

1965թ. ավարտել է Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, 1970թ.՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: 1995-2008թթ. դասավանդել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում (դոցենտ): Եղել է Հայաստանի նկարիչների միության քանդակի սեկցիայի նախագահը, ԽՍՀՄ նկարիչների միության վարչության անդամ, Հայաստանի նկարիչների միության վարչության անդամ, Հայաստանի Կանարների միության անդամ: 1965թ.-ից մասնակցել է հանրապետական և միջազգային մրցույթների, արժանացել բազմաթիվ դիպլոմների: Մոնումենտալ ստեղծագործություններից են՝ Հովհաննես Բաղրամյանի (2003թ., բրոնզ, գրանիտ, Երևան), Վահան Տերյանի (2000թ., բազալտ, Երևան), Տիգրան Պետրոսյանի (2006թ., բրոնզ, գրանիտ, բազալտ, Երևան), Գոհար Գասպարյանի (2008թ., մարմար, Երևանի Կոմիտասի անվան պանթեոն) հուշարձանները, «Անտառային հեքիաթ» (1994թ., տուֆ, Երևանի մանկական երկաթուղի), «Մայրություն» (2002թ., մարմար, Երևանի Սայաթ-Նովայի փողոց) և այլն: Աշխատանքները գտնվում են Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Հայաստանի ազգային պատկերասրահում: 2009թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

Նորայր Կարգանյանը մահացել է 2014թ. հունվարի 5-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 2-րդ փողոցն անվանակոչել հայ քանդակագործ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Նորայր Կարգանյանի անվամբ՝ «Նորայր Կարգանյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի

N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԳԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Նորայր Կարգանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԳԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Նորայր Կարգանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**